Առողջապահության լիցենզավորման ոլորտը կանոնակարգող օրենսդրության մշակման խորհրդատու

Առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների վերանայում, ստորև ըստ ցանկի.

• Ցերեկային ստացիոնար, արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում սրտաբանական, ինտերվենցիոն առիթմոլոգիական, սրտային վիրաբուժական, անոթային վիրաբուժական, մանկական սրտաբանական տեսակներով.

• Ցերեկային ստացիոնար, արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում անեսթեզիոլոգիական, մանկական անեսթեզիոլոգիական, վերակենդանացման, մանկական վերակենդանացման, ընդհանուր վիրաբուժական, ներզննական վիրաբուժական, պրոկտոլոգիական, մանկական վիրաբուժական տեսակներով.

• Ցերեկային ստացիոնար, արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում վնասվածքաբանական, օրթոպեդիական, մանկական վնասվածքաբանական, մանկական օրթոպեդիական, պլաստիկ վերակառուցողական և էսթետիկ վիրաբուժական, միկրովիրաբուժական, մաշկաբանական, վեներաբանական, կոսմետոլոգիական տեսակներով.

• Ցերեկային ստացիոնար, արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններումակնաբանական, մանկական ակնաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական, դիմածնոտային վիրաբուժական, ներզատավիրաբուժական, ներզատաբանական, մանակական ներզատաբանական տեսակներով.

Գործառութները.

1) Առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների միջազգային փորձի ուսումնասիրություն՝

2) Բժշկական օգնության և սպասարկման տեսակներով սահմանված գործունեության համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների և պայմանների վերաբերյալ Առողջապահության նախարարության խորհրդատուներից մասնագիտական դիրքորոշումների ստացում, վերլուծություն և ամփոփում,

3) Ուսումնասիրված միջազգային փորձի, ինչպես նաև Առողջապահության նախարարության խորհրդատուներից ստացված մասնագիտական դիրքորոշումների ամփոփման հիման վրա առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման գործունեության տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների և պայմանների վերանայման առաջարկների մշակում,

4) Գիտական, աշխատանքային և դիալեկտիկայի մեթոդների կիրառմամբ՝ ձևավորված առաջարկների համեմատական վերլուծության իրականացում, առավել բարենպաստ և ժամանակակի պահանջները բավարարող հայեցակարգի ձևավորում,

5) Բժշկական օգնության և սպասարկման գործունեության իրականացման լիցենզավորման կարգերը սահմանող իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում՝ շրջանառության մեջ դնելու նպատակով:

Պահանջվող որակավորում

1. Բարձրագույն բժշկական մասնագիտական կրթություն:

2. Առնվազն 7 տարվա աշխատանքաբային փորձ առաջադրանքի կատարմանն առնչվող ոլորտում:

3. ՀՀ առողջապահության համակարգի կառուցվածքի, զարգացման հեռանկարների, ինչպես նաեվ Առողջապահության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ համակարգված գիտելիքներ:

4. Առողջապահության ոլորտին առնչվող Իրավական փաստաթղթերի մշակման փորձ:

5. Հայերեն գրավոր լեզվի կատարյալ/գերազանց իմացություն: